

<p><b>Հաստատված է</b>          Հայաստանի եվրոպական համալսարանի          գիտական խորհրդի          2018թ-ի հոկտեմբերի 4-ի թիվ 05 նիստում</p> <p>Լրամշակված է գիտական խորհրդի 2020թ-ի          նոյեմբերի 12-ի թիվ 22 նիստում</p> <p>Լրամշակված է գիտական խորհրդի 2023          թվականի մարտի 7-ի թիվ 42 նիստում</p> <p>Լրամշակված է գիտական խորհրդի 2024          թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 53 նիստում</p> <p>Ռեկտոր՝ <b>Յ. Բիշարյան</b></p>	<p><b>Approved by</b>          the Scientific Council of          the European University of Armenia          October 4, 2018, at the Session N 05</p> <p>Amended by the Scientific Council,          November 12, 2020, at the Session N22</p> <p>Amended by the Scientific Council,          March 7, 2023, at the Session N 42</p> <p>Amended by the Scientific Council,          October 14, 2024, at Session 53</p> <p>Rector: <b>H. Bisharyan</b></p>
---	---

(ստորագրություն, Կ.Տ./signature)

<b>ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ</b>	<b>CODE OF ETHICS OF EUROPEAN UNIVERSITY OF ARMENIA</b>
<b>1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ</b>	<b>1. GENERAL PROVISIONS</b>
<p>1.1 Սույն կանոնակարգը սահմանում է Հայաստանի եվրոպական համալսարանի (այսուհետ՝ ՋԵՀ, Համալսարան) վարչական, պրոֆեսորադասախոսական կազմի և սովորողների էթիկայի սկզբունքները, վարքագծի չափորոշիչները, վարվեցողության և բարեվարքության կանոնները (այսուհետ՝ <i>Էթիկայի կանոններ</i>), էթիկայի կոմիտեի ձևավորման և գործունեության կարգը:</p>	<p>1.1 This regulation defines the principles of ethics of the administrative and academic staff and students of the European University of Armenia (hereinafter referred to as the EUA), along with the standards of conduct, rules of behavior and courtesy (hereinafter referred to as the Code of Ethics), and the procedure for the formation and operation of the Committee on Ethics and Disciplinary Matters.</p>
<p>1.2 Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, ՀՀ աշխատանքային օրենսգիրքը, Համալսարանի կանոնադրությունը և այլ իրավական ակտեր:</p>	<p><b>1.2</b> The legal bases of this regulation are the RA Laws «On Education» and «On Higher and Postgraduate Professional Education», the RA Labor Code, the University Charter and other legal acts.</p>

<p>1.3 Էթիկայի կանոնները ներդրվում են Համալսարանի կորպորատիվ մշակույթի ամրապնդման, մասնագիտական մոտիվացիայի բարձրացման, համերաշխության կայացման, ազգային ավանդույթների և համամարդկային արժեքների, պետական մտածողության և ազգային շահերի գիտակցման ոգով անհատի ձևավորման, Համալսարանի հեղինակությանն ու վարկանիշի բարձրացման, ինչպես նաև սույն կանոնակարգով սահմանված էթիկայի կանոնների ապահովման և անշեղ իրականացման նպատակով:</p>	<p>1.3 The rules of ethics are introduced for the purpose of strengthening the corporate culture of the University, increasing professional motivation, establishing solidarity, forming an individual in the spirit of national traditions and universal values, state thinking and awareness of national interests, increasing the reputation and ranking of the University, as well as ensuring and steadily implementing the rules of ethics defined by this regulation.</p>
<p>1.4 Սույն կանոնակարգի կիրառումը հնարավորություն կտա ամրապնդել և բարձրացնել բուհի վարչական և պրոֆեսորադասախոսական անձնակազմի, սովորողների կարգապահությունը, կորպորատիվ մշակույթը, ակադեմիական ազնվությունը, իրավական և քաղաքացիական գիտակցությունը:</p>	<p>1.4 The application of this regulation will enable to strengthen and increase the discipline, corporate culture, academic integrity, legal and civic awareness of the students and the administrative and academic staff of the university.</p>
<p>1.5 Սույն կանոնակարգը և նրանում կատարված փոփոխությունները և լրացումները հաստատվում են ՀԵՀ գիտական խորհրդի կողմից:</p>	<p>1.5 This regulation and the changes and additions made to it are approved by the Scientific Council of EUA.</p>
<p>1.6 Սույն քաղաքականությունն ուժի մեջ է մտնում Գիտխորհրդի հաստատման և հրապարակման պահից:</p>	<p>1.6 This policy comes into force upon approval and publication by the Scientific Council.</p>
<p>1.7 Տեքստերի միջև հակասությունների դեպքում գերակայությունը տրվում է հայերեն տարբերակին:</p>	<p>1.7 In case of contradictions between the texts, the priority is given to the Armenian version.</p>
<p><b>2.ՅԵՀ ԷԹԻԿԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ</b></p>	<p><b>2. THE BASIC PRINCIPLES OF ETHICS</b></p>
<p><b>2.1.Հայաստանի Եվրոպական համալսարանում կիրառվող էթիկայի հիմնական սկզբունքներն են.</b></p>	<p><b>2.1 The main principles of ethics applied at the European University of Armenia are:</b></p>

<p>1) <b>Բարեվարքություն</b> – վարքագծի համապատասխանեցում բարոյական նորմերին, վարվեցողության ընդունելի պահանջներին և չափանիշներին, ինչպես օրինակ՝ կարգապահությունը, ուղղամտությունը, զսպվածությունը, բարեկրթությունը, հետևողականությունը:</p>	<p>1) <b>Good manners</b> - compliance of behavior with moral norms, acceptable requirements and standards of conduct, such as discipline, uprightness, restraint, politeness, consistency.</p>
<p>2) <b>Ենթակարգություն</b> – հարգանք վերադաս-ստորադաս հարաբերությունների աստիճանակարգության նկատմամբ, վերադասի հանձնարարությունների անվերապահ կատարում, բացառությամբ, եթե դրանք հակասում են ՀՀ օրենսդրությանը, ՀԵՀ կանոնադրությանը և ներքին իրավական ակտերի պահանջներին:</p>	<p>2) <b>Subordination</b> - respect for hierarchy of supervisor-subordinate relationships, unconditional fulfillment of supervisor's orders, unless they contradict the RA legislation, the Charter of EUA and the requirements of internal legal acts.</p>
<p>3) <b>Արհեստավարժություն</b> – մասնագիտական պատրաստվածություն, կոմպետենտություն, մասնագիտական որակների շարունակական զարգացում և ստեղծարար նորարարություն:</p>	<p>3) <b>Proficiency</b> – professional training, competence, continuous development of professional qualities and creative innovation.</p>
<p>4) <b>Պատասխանատվություն և հաշվետվողականություն</b> – որոշումների կայացման և քայլերի ձեռնարկման հետևանքների գիտակցում, մասնագիտական և հանրային պարտքի ընկալում, լիազորությունների պատշաճ և հաշվետվողական կատարում:</p>	<p>4) <b>Responsibility and accountability</b> – awareness of the consequences of decision-making and actions, perception of professional and public duty, proper and accountable performance of authority.</p>
<p>5) <b>Ակադեմիական ազատություն</b> – ստեղծարար ունակությունների անկաշկանդ դրսևորման, մասնագիտական ընտրության և աճի խթանման հնարավորություն, ակադեմիական տարբեր աղբյուրներից և հարթակներից օգտվելու ազատություն:</p>	<p>5) <b>Academic freedom</b> – the opportunity to freely display creative abilities, promote professional choice and growth, freedom to use various academic sources and platforms.</p>

<p>6) <b>Արդյունավետություն</b> – ակադեմիական ռեսուրսների օպտիմալ, խնայողական և նպատակային բաշխում և օգտագործում:</p>	<p>6) <b>Efficiency</b> – optimal, economical and targeted allocation and use of academic resources.</p>
<p>7) <b>Մասնավոր և կոլեկտիվ շահերի գուգակցում</b> – անձնական շահերի և ակադեմիական համընդհանուր շահերի ներդաշնակ միասնություն: Մասնագիտական պարտականությունների կատարում՝ առաջնորդվելով ոչ միայն և անձնական, այլ նաև կոլեկտիվ շահերով: Շահերի բախման հնարավոր դեպքերից խուսափում, դրանց սահուն կարգավորում: Մասնավոր և կոլեկտիվ շահերի բախման երկընտրանքի դեպքում կոլեկտիվ շահերի գերակայություն:</p>	<p>7) <b>Combination of private and collective interests</b> - harmonious unity of personal and academic interests. Performance of professional duties guided not only by personal but also collective interests. Avoidance of possible conflicts of interest, their smooth settlement. Predominance of collective interests in the case of a conflict between private and collective interests.</p>
<p>8) <b>Համերաշխություն</b> – բուհի շահառուների միջև հարաբերությունների կառուցում՝ հիմնված՝ հանդուրժողականության, փոխօգնության, մարդասիրության, համագործակցության, բարեկրթության, նրբանկատության, ներառականության, արժանապատվության, ֆիզիկական ու հոգեկան անձեռնմխելիության գաղափարների և իրավունքների հարգման վրա:</p>	<p>8) <b>Solidarity</b> – building relationships between university stakeholders based on the ideas of tolerance, mutual aid, humanity, cooperation, kindness, tact, inclusiveness, dignity, physical and mental integrity and respect for rights.</p>
<p>9) <b>Վստահություն</b> - փոխհարաբերությունները կառուցելիս առաջնորդվել միմյանց նկատմամբ վստահության և փոխըմբռնման կանխավարկածով:</p>	<p>9) <b>Trust</b> - when building relationships, be guided by the assumption of mutual trust and mutual understanding.</p>
<p>10) <b>Հրապարակայնություն և թափանցիկություն</b> – բուհի գործունեության մասին տեղեկատվության հասանելիություն և մատչելիություն, բացառության ՀՀ օրենսդրությամբ և բուհի</p>	<p>10) <b>Publicity and transparency</b> - access and availability of information about the activities of the university, except for the cases if it is not provided by RA legislation and university charter.</p>

<p>կանոնադրությամբ չնախատեսված դեպքերի:</p>	
<p>11) <b>Արդարություն և համաչափություն</b> – օբյեկտիվ, անկողմնակալ և անաչառ մոտեցումների առաջադրում և կիրարկում, գործադրած քայլերի և ակնկալվող նպատակների հավասարակշռություն:</p>	<p>11) <b>Fairness and impartiality</b> – proposing and implementing objective, fair and unbiased approaches, balancing the taken steps and the expected goals.</p>
<p>12) <b>Հավասարություն</b> – ակադեմիական հանրույթում խտրականության բացառում, ներառականություն, իրավահավասարություն անկախ տարիքից, սեռից, հաշմանդամությունից, ռասայից, էթնիկ պատկանելիությունից, կրոնից և դավանանքից:</p>	<p>12) <b>Equality</b> – non-discrimination, inclusiveness, equality in the academic community regardless of age, gender, disability, race, ethnicity, religion and creed.</p>
<p>13) <b>Խորհրդապահություն և գաղտնիություն</b> – ծառայողական պարտականությունների իրականացման ընթացքում հասանելի տեղեկատվության օգտագործման արգելք ոչ ծառայողական նպատակներով, որի արդյունքում կարող է վնաս հասցվել Համալսարանի շահառուների կյանքին և առողջությանը, պատվին, արժանապատվությանը և բարի համբավին, Համալսարանի հեղինակությանը և վարկանիշին: Հարգանք մարդու անձնական տվյալների պաշտպանության, անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիության և այլ իրավունքների նկատմամբ:</p>	<p>13) <b>Privacy and confidentiality</b> - prohibition of the use of information available during the performance of official duties for non-official purposes, as a result of which damage may be caused to the life and health of the beneficiaries of the University, honor, dignity and good reputation, reputation and ranking of the University. Respect for the protection of one's personal data, privacy of personal and family life and other rights.</p>
<p>14) <b>Արտահայտվելու և խոսքի ազատություն</b> -որոշումների կայացման գործընթացներում այդ թվում՝ իրենց իրավասությունների շրջանակում ազատ արտահայտվելու և կարծիք հայտնելու հնարավորություն:</p>	<p>14) <b>Freedom of Expression and Speech</b> –the ability to freely express oneself and offer opinions within the scope of one's authority, including participation in decision-making processes.</p>
<p><b>3. ՀԵՅ ԿԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՊՐՈՑԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ</b></p>	<p><b>3. RULES OF ETHICS FOR ADMINISTRATIVE AND ACADEMIC STAFF OF EUA</b></p>

<p>3.1 Բարեխղճորեն կատարել աշխատանքային պարտականությունները՝ պարտքի և պատասխանատվության բարձր գիտակցմամբ:</p>	<p>3.1 Conscientiously perform work duties with a high sense of duty and responsibility.</p>
<p>3.2 Շարունակաբար կատարելագործել և հարստացնել մասնագիտական որակները, ձգտել ստեղծարար և նորարական գործիքների ներդրմանը և կիրառմանը:</p>	<p>3.2 Continuously improve and enrich professional qualities aimed at the usage of creative and innovative tools.</p>
<p>3.3 Գործառույթներն ու պարտականություններն իրականացնելիս ներդաշնակորեն զուգակցել անձնական և մասնավոր շահերը ակադեմիական և համալսարանական շահերին:</p>	<p>3.3 Harmoniously combine personal and private interests with academic and university interests while performing functions and responsibilities.</p>
<p>3.4 Չհետապնդել անձնական շահ՝ օգտագործելով զբաղեցրած պաշտոնը, չպահանջել կամ չընդունել նվեր կամ որևէ նյութական բարիք և անձնական օգուտ ծառայողական պարտականությունները կատարելու դիմաց:</p>	<p>3.4 Not to pursue personal benefit using the position held, not to demand or accept a gift or any material good in exchange for the performance of official duties.</p>
<p>3.5 Պահպանել ծառայողական, առևտրային, ապահովագրական գաղտնիքը, ներքին կազմակերպական տեղեկատվության և հանդիպումների գաղտնիությունը:</p>	<p>3.5 Maintain service, commercial, insurance secrecy, confidentiality of internal organizational information and meetings.</p>
<p>3.6 Նպաստել համընդհանուր հարգանքի և փոխըմբռնման մթնոլորտի հաստատմանը՝ արդարության, համերաշխության, հանդուրժողականության, իրավահավասարության և խտրականության բացառման սկզբունքներին համապատասխան:</p>	<p>3.6 Contribute to the establishment of an atmosphere of mutual respect and understanding in accordance with the principles of justice, solidarity, tolerance, equality and non-discrimination.</p>
<p>3.7 Խթանել գործընկերների և սովորողների առողջ ապրելակերպը, նրանց մասնագիտական, գեղագիտական, բարոյական և հոգևոր պահանջմունքների զարգացումը:</p>	<p>3.7 To promote a healthy lifestyle among colleagues and learners, as well as the development of their professional, aesthetic, moral, and spiritual needs.</p>
<p>3.8 Չոտնահարել և չնստեմացնել դիմացինի արժանապատվությունը, անհարկի և</p>	<p>3.8 To refrain from violating or diminishing the dignity of others, and to avoid expressing</p>

<p>չարդարացված և գնահատականներ հասցեին:</p>	<p>unwarranted and unjustified characterizations or judgments toward one another.</p>
<p>3.9 Չգբադվել քարոզչությամբ, հակաբարոյական արժեքների, ատելության և թշնամանքի տարածմամբ և սերմանմամբ:</p>	<p>3.9 Not to engage in destructive propaganda, spreading and instilling harmful and immoral values, hatred and enmity.</p>
<p>3.10 Հարգել գործընկերների և սովորողների պատիվն ու արժանապատվությունը, նրանց կրոնական և քաղաքական համոզմունքները, խուսափել ցանկացած շահագործումից կամ հետապնդումից և այլ խտրական վերաբերմունքից:</p>	<p>3.10 Respect the honor and dignity of colleagues and students, their religious and political beliefs, avoid any exploitation or harassment and other discriminatory treatment.</p>
<p>3.11 Մասնագիտական հմտությունները և ակադեմիական ազատությամբ և ակադեմիական ազնվությամբ:</p>	<p>3.11 Demonstrate professional knowledge and skills guided by academic freedom and academic integrity.</p>
<p>3.12 Արդյունավետ ամրացված գույքը և նյութատեխնիկական ռեսուրսները և աշխատանքային պարագաները, բացառել դրանց անձնական նպատակերով օգտագործումը:</p>	<p>3.12 Effectively use the property, logistical resources and work supplies allotted to them.</p>
<p>3.13 Չաղտոտել համալսարանի տարածքը և մաքուր պահել միջավայրը:</p>	<p>3.13 Keep the University area and environment clean.</p>
<p>3.14 Աշխատանքի ժամանակին, հնարավոր ուշացման դեպքում նախապես տեղեկացնել անմիջական ղեկավարին կամ մարդկային ռեսուրսների կառավարման պատասխանատուին:</p>	<p>3.14 To be on time for work, in case of possible delay, notify the immediate supervisor or human resources management officer in advance.</p>
<p>3.15 Հագնվել կոկիկ՝ բացառելով սպորտային համազգեստով և անփույթ կամ անհարկի ուշադրություն գրավող հագուստով աշխատավայր ներկայանալը:</p>	<p>3.15 Dress neatly, excluding sports uniforms and sloppy or unnecessarily attention-grabbing clothing.</p>

<p>3.16 Խուսափել գունազեղ և ճչացող շպարից, գարդերի և այլ աքսեսուարների առատությունից:</p>	<p>3.16 Avoid colorful and flashy makeup, wearing too much jewelry and other accessories.</p>
<p>3.17 Առանց աշխատանքային անհրաժեշտության չօգտվել ծառայողական հեռախոսներից և կապի մյուս միջոցներից:</p>	<p>3.17 Not to use business telephones and other means of communication without work necessity.</p>
<p>3.18 Ոչ աշխատանքային նպատակներով զերծ մնալ համացանցից և սոցիալական կայքերի օգտագործման չարաշահումից:</p>	<p>3.18 Refrain from misuse of the Internet and social networking sites for non-work purposes.</p>
<p>3.19 Բուհում չօգտագործել ոգելից խմիչք, ծխախոտ (այդ թվում՝ Էլեկտրոնային և փոխարինիչներ), թմրամիջոցներ և հոգեմետ ներգործության միջոցներ, չզբաղվել թղթախաղով, զերծ մնալ վնասակար սովորություններից և հակումներից: Ծխել թույլատրվում է միայն դրա համար առանձնացված հատուկ տարածքներում:</p>	<p>3.19 Not to use alcohol, tobacco, drugs and psychotropic substances, not to engage in card games, to refrain from harmful habits and tendencies in the university. Smoking is allowed only in designated areas.</p>
<p>3.20 Դրսևորել հարգալից վերաբերմունք ՅԵՅ աշխատակիցների և ուսանողների (այդ թվում՝ ազգային էթնիկ խմբերի) նկատմամբ, դրսևորել բացառապես պատշաճ խոսելաձև և ցուցաբերել բարեկիրթ վարքագիծ, խուսափել միմյանց վիրավորելուց և անձի արժանապատվությունը ոտնահարելուց:</p>	<p>3.20 Demonstrate respectful behavior towards the staff and students of the European University of Armenia (EUA), including individuals from various national and ethnic groups. Maintain exclusively appropriate language and exhibit courteous conduct, avoiding any form of insult or actions that may undermine the dignity of others.</p>
<p>3.21 Բացառել ՅԵՅ-ում ֆիզիկական և հոգեկան բռնությունները:</p>	<p>3.21 Eliminate all forms of physical and psychological violence at the European University of Armenia (EUA)</p>
<p>3.22 Աշխատանքային բոլոր հարաբերություններում պահպանել աստիճանակարգությունը:</p>	<p>3.22 Maintain the hierarchical structure in all professional relationships.</p>
<p>3.23 Զամալսարանում բացառել ցանկացած կրոնական կամ քաղաքական քարոզչություն:</p>	<p>3.23 Prohibit any form of religious or political advocacy within the university.</p>
<p>3.24 Սոցիալական հարթակներում դրսևորել բարեկրթություն, տարբեր տեսակի մեկնաբանություններում ցուցաբերել զսպվածություն, ցանկած հարցազրույց</p>	<p>3.24 Demonstrate courtesy on social platforms, display restraint in various types of comments, and, when giving any interview — especially without authorization from the university—</p>



<p>տալիս այդ թվում՝ համալսարանի կողմից լիազորված չլինելու դեպքում, շեշտել, որ ներկայացվող մտքերը պատկանում են իրեն:</p>	<p>explicitly clarify that the expressed opinions are solely personal.</p>
<p>3.25 Հարգել գործընկերների մասնագիտական կարծիքը, դիրքորոշում, քննադատություն կամ մեղադրանք չներկայացնել ուսանողի ներկայությամբ: Գործընկերոջ հասցեին հնչող քննադատություններն ու մեղադրական եզրակացություններն ու կարծիքները արտահայտել միայն վերջինիս ներկայությամբ՝ ներկայացնելով հիմքեր:</p>	<p>3.25 Respect the professional opinions, attitude, and criticisms of colleagues, and refrain from expressing criticism or accusations in the presence of students. Convey any criticisms, accusatory conclusions, or opinions concerning a colleague only in their presence, accompanied by appropriate justification.</p>
<p>3.26 Չերծ մնալ համալսարանի պաշտոնական ձևաթղթի և կնիքի անօրինական կիրառումից, պաշտոնական նյութերը կամ փաստաթղթերը վնասելուց, կեղծելուց և դրանք ոչնչացնելուց:</p>	<p>3.26 Refrain from the unauthorized use of the university's official letterhead and seal, as well as from damaging, falsifying, or destroying official materials or documents.</p>
<p>3.27 Դրսևորել ակադեմիական բարեվարքություն և ազնվություն, զերծ մնալ գրագողությունից և ինքնագրագողությունից</p>	<p>3.27 Demonstrate academic integrity and honesty; avoid plagiarism and self-plagiarism.</p>
<p>3.28 Բացառել ուսանողներին որևէ կերպ քննությունների համար նախապես հաստատված քննական տոմսերի, այդ թվում՝ քննական տոմսերի պատասխանների տրամադրումը, ինչպես նաև հուշարարությունը, թույլ չտալ արտագրության դրսևորումներ:</p>	<p>3.28 The provision of pre-approved examination tickets to students, including the dissemination of answers to examination questions or any form of prompting, is strictly prohibited. Instances of academic dishonesty or plagiarism shall not be permitted under any circumstances</p>
<p>3.29 Իրականացնել ՀՀ օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով՝ այդ թվում սույն կանոնակարգով սահմանված նորմերի պահանջները:</p>	<p>3.29 Implement the requirements of the RA legislation, the University charter and internal legal acts, including the norms defined by this regulation.</p>
<p><b>4. ՀԵՅ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ</b></p>	<p><b>4. RULES OF ETHICS FOR EUA STUDENTS</b></p>
<p>4.1 Բարձր պահել Համալսարանի վարկը և հեղինակությունը:</p>	<p>4.1 To uphold the reputation of the University.</p>

<p>4.2 Բուհական միջավայրում և ակադեմիական հանրույթում դրսևորել կարգապահություն, գսավածություն, բարեկրթություն:</p>	<p>4.2 To demonstrate discipline, restraint, politeness in the university environment and in the academic community.</p>
<p>4.3 Ուսումնառության և հետազոտական գործունեության ընթացքում չգրադվել գրագողությամբ, ինքնագրագողությամբ խարդախությամբ, տվյալների և լաբորատոր կամ փորձարարական աշխատանքների արդյունքների կեղծմամբ և ակադեմիական ազնվության այլ խախտումներով, զերծ մնալ փաստաթղթերը կեղծելուց:</p>	<p>4.3 During the study course and research activities, refrain from engaging in plagiarism, self-plagiarism, fraud, falsification of data and results of laboratory or experimental work, and other violations of academic integrity, and avoid falsifying documents.</p>
<p>4.4 Չարտուղի ճանապարհներով չփորձել ստանալ չնախատեսված արտոնություններ և գնահատականներ:</p>	<p>4.4 Don't try to get unintended privileges and marks in sly ways.</p>
<p>4.5 Առանց հարգելի պատճառի բաց չթողնել դասերը կամ ուշանալ դասերից, իսկ վերջինիս դեպքում՝ ներողություն խնդրել ուշացման համար և աննկատ զբաղեցնել առաջիկա ազատ նստարանը՝ չխաթարելով դասի բնականոն ընթացքը:</p>	<p>4.5 Not to miss classes or be late for classes without a good reason, and in the latter case, to apologize for being late and ask permission to attend class.</p>
<p>4.6 Չխաթարել դասապրոցեսի բնականոն ընթացքը, անհարկի չընդհատել դասախոսին և առանց թույլտվության չլքել լսարանը:</p>	<p>4.6 Not to disrupt the normal course of the class, do not interrupt the lecturer unnecessarily and do not leave the classroom without permission.</p>
<p>4.7 Ըմբռնումով վերաբերվել իրենց հանդեպ դրսևորած արդարացի դիտողություններին և նկատողություններին, առողջ քննադատություններին, քայլեր ձեռնարկել շտկելու դրանց հետևանքները:</p>	<p>4.7 To treat with understanding the fair remarks and criticisms shown to them, healthy criticisms, correct their consequences.</p>
<p>4.8 Ուսումնառության ընթացքում նպաստել համընդհանուր հարգանքի և փոխըմբռնման մթնոլորտի հաստատմանը՝ արդարության, համերաշխության, հանդուրժողականության, իրավահավասարության և խտրականության բացառման սկզբունքներին համապատասխան:</p>	<p>4.8 To contribute to the establishment of an atmosphere of universal respect and mutual understanding during studies in accordance with the principles of justice, solidarity, tolerance, equality and non-discrimination.</p>

<p>4.9 Չոտնահարել և չնստմացնել դիմացինի արժանապատվությունը, անհարկի և չարդարացված որակումներ և գնահատականներ չհնչեցնել միմյանց հասցեին:</p>	<p>4.9 Not to trample and belittle the dignity of the other person, do not make unnecessary and unjustified comments and remarks towards each other.</p>
<p>4.10 Չզբաղվել ապակառուցողական քարոզչությամբ, վնասակար և հակաբարոյական արժեքների, ատելության և թշնամանքի տարածմամբ և սերմանմամբ:</p>	<p>4.10 Not to engage in destructive propaganda, spreading and instilling harmful and immoral values, hatred and enmity.</p>
<p>4.11 Հարգել դասընկերների և ակադեմիական հանրույթի ներկայացուցիչների պատիվն ու արժանապատվությունը, նրանց , ազգային էթնիկ պատկանելիությունը, կրոնական և քաղաքական հայացքները, անձնական առանձնահատկությունները:</p>	<p>4.11 To respect the honor and dignity of classmates and representatives of the academic community, their religious and political views, and personal characteristics.</p>
<p>4.12 Դասապրոցեսի ժամանակ անհարկի չօգտվել հեռախոսից, համակարգչից և այլ տեխնիկական և հաղորդակցության միջոցներից, չզբաղվել դասին չառնչվող կողմնակի աշխատանքներով:</p>	<p>4.12 Not to use the phone and other technical and communication means during the lesson, not to engage in the activities not related to the lesson.</p>
<p>4.13 Չաղտոտել և մաքուր պահել Համալսարանի տարածքը և շրջակա միջավայրը:</p>	<p>4.13 To keep the University area and the environment clean.</p>
<p>4.14 Հագնվել կոկիկ՝ բացառելով սպորտային համազգեստով և անփույթ կամ անհարկի ուշադրություն գրավող հագուստով Համալսարան ներկայանալը:</p>	<p>4.14 To dress neatly, excluding sports uniforms and sloppy or unnecessarily attention-grabbing clothing on campus.</p>
<p>4.15 Խուսափել գունազեղ և ճչացող շպարից, զարդերի և այլ աքսեսուարների բազմազանությունից և առատությունից:</p>	<p>4.15 To avoid colorful and flashy makeup, wear too much jewelry and other accessories.</p>
<p>4.16 Բուհում չօգտագործել ոգելից խմիչք, ծխախոտ (այդ թվում՝ էլեկտրոնային և փոխարինիչներ), թմրամիջոցներ և հոգեմետ ներգործության միջոցներ, չզբաղվել թղթախաղով, գերծ մնալ վնասակար սովորություններից և հակումներից: Ծխել</p>	<p>4.16 Not to use alcohol, tobacco, drugs and psychotropic substances, not to engage in card games, to refrain from harmful habits and tendencies in the university. Smoking is allowed only in designated areas.</p>

<p>թույլատրվում է միայն դրա համար առանձնացված հատուկ տարածքներում:</p>	
<p>4.17 Արգելվում է Համալսարան մուտք գործել այլ ուսանողի անցաքարտով կամ այլ զարտուղի ճանապարհով:</p>	<p>4.17 The use of another student's access card or any unauthorized method to enter University premises is prohibited</p>
<p>4.18 Արգելվում է այլ ուսանողի փոխարեն և անցաքարտով վերջինսի փոխարեն մասնակցել քննություններին:</p>	<p>4.18 Participation in examinations on behalf of another student or using another student's identification/access card is strictly prohibited.</p>
<p>4.19 Արգելվում է ուսանողներին օգտվել ՋԵՅ աշխատակիցների համար նախատեսված ավտոկայանատեղիից:</p>	<p>4.19 The use of parking facilities designated for University personnel is strictly prohibited for students</p>
<p>4.20 Արգելվում է Համալսարանում կամ հարակից տարածքներում հրահրել կամ կազմակերպել ծեծկռտուք կամ վեճ, հնչեցնել հայիոյանքներ և խաթարել համալսարանի բնականոն գործունեությունը:</p>	<p>4.20 It is prohibited to incite or organize fights or alterations within the University or its surrounding areas, to use offensive language, or to disrupt the normal functioning of the University.</p>
<p>4.21 <b>Քննության և ստուգարքի ժամանակ դրսևորել ազնիվ վարքագիծ՝ բացառել արգելված աջակցությունը մասնավորապես՝</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Քննության ժամանակ քննասենյակում չօգտվել բջջային հեռախոսից կամ այլ տեխնիկական միջոցից, որը կարող է արտաքին կապի միջոց հանդիսանալ:</li> <li>• Չարտագրել կամ այլ ուսանողների չօժանդակել արտագրել քննության պատասխանները:</li> <li>• Արգելվում է քննական նյութերը դուրս բերել քննասենյակից և դրանք տարածել:</li> <li>• Արգելվում է քննության ժամանակ զբաղվել հուշարարությամբ այդ թվում չտալ և չստանալ տեղեկատվություն որը վերաբերում է քննվող առարկայի նյութերին (տեղեկատվության փոխանցումը վերաբերում է էլեկտրոնային և բանավոր տարբերակին):</li> </ul>	<p>4.21 During examinations and assessments, demonstrate honest behavior by refraining from prohibited assistance especially</p> <ul style="list-style-type: none"> <li>• During examinations, do not use mobile phones or any other technical devices in the examination room that may serve as a means of external communication</li> <li>• Do not plagiarize or assist other students in plagiarizing examination answers</li> <li>• It is forbidden to remove examination materials from the examination room and distribute them</li> <li>• It is prohibited to engage in prompting during examinations, including giving or receiving information related to the materials of the subject being examined (information transfer applies to both electronic and verbal forms)</li> <li>• Do not complete the entire presented assignment or any part of it on behalf of another student.</li> </ul>

<ul style="list-style-type: none"> <li>Այլ ուսանողի փոխարեն չլրացնել ամբողջ ներկայացված առաջադրանքը կամ դրա մի մասը:</li> </ul>	
<p>4.22 Իրականացնել ՀՀ օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով՝ այդ թվում սույն կանոնակարգով սահմանված նորմերի պահանջները:</p>	<p>4.22 To implement the requirements of the RA legislation, the University charter and internal legal acts, including the norms defined by this regulation.</p>
<p><b>5. ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵ</b></p>	<p><b>5. ETHICS COMMITTEE</b></p>
<p>5.1 Էթիկայի կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) ՀԵՀ գիտական խորհրդին առնաթեր գործող կոլեգիալ մարմին է, որը ներկայացված հաղորդման հիման վրա էթիկայի և կարգապահական կանոնների խախտման վերաբերյալ հարուցում է վարույթ և տալիս եզրակացություն:</p>	<p>5.1 The Committee on Ethics and Disciplinary Matters (hereinafter referred to as the Committee) is a collegial body affiliated to the Scientific Council of EUA, which, based on the submitted report, initiates proceedings and issues a conclusion on the violation of ethics and disciplinary rules.</p>
